Պատվաստանյութեր

Դպրոցահասակ երեխաների համար

Պատվաստանյութերը կարևոր նշանակություն ունեն երեխաներին լուրջ հիվանդություններից պաշտպանելու գործում: Կալիֆորնիայում անհրաժեշտ է, որ ծնողները տրամադրեն յուրաքանչյուր երեխայի բոլոր պատվաստումների փաստերը, նախքան երեխան կսկսի դպրոց կամ երեխայի խնամքի կենտրոն գնալ՝ անկախ դրանից՝ նոր է ընդունվում, թե տեղափոխվում է: Լիովին պատվաստվելով՝ երեխաները ոչ միայն պաշտպանում են իրենց, այլև ապահովում են իրենց դասընկերների և ուսուցիչների առողջությունն ու անվտանգությունը:

Այս պատվաստանյութերը օգտագործվել են տասնամյակներ շարունակ և անվտանգ են մանկական այնպիսի հիվանդությունների կանխարգելման համար, ինչպիսիք են կարմրուկը, խոզուկն ու ջրծաղիկը, և կարող են օգնել դադարեցնել վարակների տարածումը դպրոցում և տանը: Դրանք մանրակրկիտ կերպով փորձարկվել են համոզվելու համար, որ ավելի լավ պաշտպանություն են ապահովում ձեր երեխայի համար, քան եթե նա ընդհանրապես պատվաստված չլիներ:

Առավելագույնս պաշտպանված լինելու համար երեխաները պետք է ժամանակին ստանան իրենց բոլոր պատվաստանյութերը՝ ներառյալ դրանք, որոնք իրենց պաշտպանում են գրիպից և COVID-19-ից:

Ո՞ր պատվաստանյութերով պետք է իմ երեխան պատվաստվի:

Անցումային մանկապարտեզից / մանկապարտեզից (TK/K) մինչև 12-րդ դասարան՝

- **Դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (DTaP) դեմ պատվաստանյութ:** 7 տարեկանից փոքր երեխաներին անհրաժեշտ է մի քանի դեղաչափ՝ պաշտպանվելու համար դիֆթերիայից, փայտացումից և կապույտ հազից, որոնք վտանգավոր են հատկապես նորածինների համար:
- **Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստանութ:** Սա երկու կամ երեք դեղաչափից բաղկացած շարք է, որը խորհուրդ է տրվում բոլորին՝ կանխելու համար քաղցկեղը և լյարդի հիվնդությունը, որն առաջանում է հեպատիտ Բ վիրուսից:
- **Պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութն արդյունավետ է երեխաներին պաշտպանելու այս լուրջ հիվանդությունից, որը կարող է առաջացնել ցմահ կաթված:
- **ԿԿԽ (MMR) պատվաստանյութ:** Ընդունեք երկու դեղաչափ՝ առավելագույնս պաշտպանվելու համար այս հեշտությամբ փոխանցվող հիվանդություններից՝ կարմրուկ, խոզուկ և կարմրախտ (գերմանական կարմրուկ):
- **Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ:** Սա երկու դեղաչափից բաղկացած շարք է, որ տրվում է երեխաներին՝ կանխելու այս խիստ վարակիչ հիվանդությունը, որն առաջացնում է քոր եկող, բշտիկների նման ցան:

County of Los Angeles Public Health

(Armenian)

Պատվաստանյութեր

Դպրոցահասակ երեխաների համար

- **Գրիպի դեմ պատվաստանյութ:** Սա պետք է ստանաք ամեն տարի, հատկապես աշնանը, որպեսզի նվազեցնեք գրիպով հիվանդանալու հավանականությունը:
- **COVID-19-ի դեմ պատվաստանյութ:** Այս պատվաստանյութը ժամանակ առ ժամանակ թարմացվում է՝ պաշտպանելու վիրուսի ամենանոր ենթատեսակներից: 6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց խորհուրդ է տրվում ստանալ թարմացված COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն1 դեղաչափ:
- **Փայտացման, դիֆթերիայի կապույտ հազի (Tdap) դեմ պատվաստանյութ:** Ավելի մեծ երեխաներին անհրաժեշտ է 1 դեղաչափ՝ պաշտպանվելու համար փայտացումից, դիֆթերիայից և կապույտ հազից: Սա պահանջվում է 7-րդ դասարանը սկսող աշակերտներից:

Ստուգեք Ձեր դպրոցական շրջանի հետ, որպեսզի հաստատեն, թե որ պատվաստանյութերն են անհրաժեշտ դպրոցում: Պատվաստանյութերի ամբողջական ցանկի համար՝ ըստ տարիքի և TK-12-րդ դասարանի պահանջների, այցելեք shotsforschool.org:

Խոսեք Ձեր բժշկական մատակարարի հետ՝ այն մասին, թե ինչպես պաշտպանել նորածիններին և երեխաներին շնչառական սինցիտիալ վարակից (SRV) առաջացող սուր շնշառական հիվանդություններից:

Ինչպե՞ս ես պատվաստվեմ:

- Խոսեք ձեր մանկաբույժի հետ դպրոց վերադառնալու համար և տարեկան պատվաստումների մասին:
- Եթե չունեք բժշկական ծառայությունների մատակարար, այցելեք http://publichealth.lacounty.gov/vaccines՝ անվճար կամ ցածր արժեքներով պատվաստման կլինիկաների ցանկի և պատվաստանյութերի մասին հավելյալ տեղեկությունների համար:
- Լավագույնն այն է, որ Դուք կարող եք պատվաստումների մեծ մասն անել միևնույն այցի ընթացքում: Դա նշանակում է ավելի քիչ անհարմարություն ձեր երեխաների համար, և դուք ավելի քիչ ժամանակ կանցկացնեք այդ գործողությունների վրա:

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8-ը՝ շաբաթը յոթ օր:

County of Los Angeles Public Health